Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2010թ. դեկտեմբերի 13-ին կայացած թիվ 4 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էր Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հր. Սիմոնյանը: Վերջինս տարեկան հաշվետվության ելույթի համար ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանին:

Ա. ԱՎԱԳՅԱՆ - Ֆակուլտետի դեկանը հանգամանալից անդրադարձավ ուսումնական գործընթացին (ուսումնական ծրագրեր, առարկայական ծրագրերի նորացում, դասավանդման մեթոդիկայի կատարելագործում, եռաստիճան ուսուցման խնդիրների հետ կապված աշխատանքների հստակեցում... Նա նկատեց, որ ֆակուլտետի պրոֆեսորներն ու դոկտորները «գրականագիտություն» և «լեզվաբանություն» մասնագիտական գիտխորհրդի անդամներ են համալսարանում, լեզվի և գրականության ինստիտուտներում: Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեությունն ընդգրկել է հանրապետական մասշտաբներ (ակտիվ մասնակցություն գիտական նըստաշրջաններին և քննարկումներին, զանազան միջոցառումներ՝ գրականության, լեզվի ինստիտուտներում, Ազգային գրադարանում, Լեռնային Ղարաբաղում, Գրողների միությունում, Ռազմական կայազորում, կրթության և գիտության նախարարությունում՝ կրթությանը և դասագրքերին վերաբերող):

Դեկանը մանրամասն զեկուցեց բոլոր ամբիոնների՝ վերջին մի քանի տարում հրատարակած մենագրությունների ու գիտական ուսումնասիրությունների մասին և հայտնեց իր գոհունակությունն այդ ասպարեզում:

Պրոֆ. Ա. Ավագյանն ընդգծեց, որ հաշվետու ժամանակամիջոցում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝

1.պարբերաբար լույս են ընծայվել պատի թերթեր (նաև՝ ֆակուլտետի «Բանասեր» թերթը), ֆոտոստենդներ.

2. ֆակուլտետի դասախոսները մասնակցել են Հայագիտության միջազգային համաժողովին, ռուսական և ռոմանագերմանական ֆակուլտետների գիտա-

կան նստաշրջաններին, Գրողների միության հետ կազմակերպվել են գիտական նստաշրջաններ և «Գրական թերթի» համարների քննարկումներ.

3. ռեկտորատում նշվել են մեր մի շարք դասախոսների հոբելյանները...

Դեկանն անդրադարձավ նաև ֆակուլտետի գործունեության մեջ տեղ գտած որոշ թերություններին: Նա մասնավորապես նկատեց, որ եռանդուն չեն աշխատում կուրսղեկները, իր աշխատանքները պետք է լավացնի ֆակուլտետի մեթոդ- խորհուրդը, ամբիոնները քիչ են նախաձեռնեում մասնագիտական միջոցառումներ, շարունակվում են թույլ մնալ ֆակուլտետի միջազգային կապերը, հայկական գաղութների և հայագիտական կենտրոնների հետ առնչությունները սակավ են, ճիշտ է, նկատելի է առաջընթաց, սակայն դեռևս այնքան էլ բարձր մակարդակի վրա չէ աշխատանքային կարգապահությունը (դասախոսների, ուսանողների, աշխատակիցների, դեկանատի):

Ելույթ ունեցող բոլոր ամբիոնի վարիչներն ու մյուս աշխատակիցները (Լ. Եզեկյան, Ս. Մուրադյան, Վ. Գաբրիելյան, Լ. Մնացականյան...) բարձր գնահատեցին բանասիրական ֆակուլտետի դեկան պրոֆ. Արծրուն Ավագյանի՝ հաշվետու ժամանա-կաշրջանում կատարած բեղմնավոր աշխատանքը և իրենց շնորհակալությունը հայտնեցին ֆակուլտետում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի և ուսումնական գործընթացի կատարելագործման համար:

Նիստն ամփոփեց համալսարանի ռեկտոր Ա. Սիմոնյանը: Նա գոհունակություն հայտնեց հայ բանասիրության ֆակուլտետում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի, գիտաուսումնական առաջընթացի համար և շնորհակալություն հայտնեց դեկան Ա. Ավագյանին:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին՝

1. ՀՀ ԿԳ նախարարության կողմից առաջարկված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հաշվետվության հարցը /կից ներկայացվում են քաղվածքները/:
2. **ԼՍԵՑԻՆ.-** Հայ նորագույն գրականության ամբիոնի միջնորդությունը «Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուի 2-րդ հատորը հրատարակության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Կ. Աղաբեկյանը:

Նշվեց, որ հայ նորագույն գրականության ամբիոնը հայ մեծ գրող Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ 2006թ. հրատարակել է «Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուն, որը լավ ընդունելության է արժանացել:

Մաթևոսյանի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ, հանրապետական հոբելյանական հանձնաժողովի ծրագրով, ԵՊՀ-ում 2010թ. նոյեմբերին նույնպես կազմակերպվել է գիտական նստաշրջան, որտեղ ֆակուլտետի գիտական կարող ուժերի կողմից կարդացվել են հետաքրքիր զեկուցումներ: Այդ զեկուցումների հիման վրա գրվել են գիտական հոդվածներ, որոնք արժանի են տպագրության: Ահա այդ, նաև նախատեսված, բայց չկարդացված հոդվածներն են ներկայացվում հրատարակման նոր ժողովածուով՝ որպես «Մաթևոսյանական ընթերցումների» 2-րդ գիրք: «Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուն մեծապես օգտակար կարող է լինել Հ. Մաթևոսյանի ստեղծագործությամբ և արդի գրականությամբ բոլոր հետաքրքրվողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուն /12 մամուլ/ երաշխավորել հրատարակության և միջնորդել ԵՊՀ հրատարակչական խորհրդին՝ հրատարակելու այն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ